ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ*

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա,
hakobyan76taron@gmail.com
0009-0009-9124-4273
DOI: 10.54503/1829-4073-2025.1.92-106

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ (1986–1991 ԹԹ.)

Ամփոփում

Սույն հոդվածում ներկայացվում են 1986–1991 թթ. Արցախում տեղի ունեցած քաղաքական գործընթացները՝ հատկապես կարևորվել են Արցախյան շարժման նոր փուլի համատեքստում ստեղծված ընդհատակյա և ոչ ընդհատակյա կազմակերպությունների դերն ու նշանակությունը:

Իրադարձությունների վերլուծությունը ցույց տվեց, որ շարժման նոր փուլը զարթոնք ապրեց ազգային նկարագիր ունեցող երիտասարդության և մտավորականության ջանքերի շնորհիվ: Հետագայում շարժման մեջ ձևավորվեց երկու հակառակ քաղաքական ուղղություն, որոնց պայքարը իր բացասական ազդեցությունը թողեց ազատագրական պայքարի որակի վրա:

Քաղաքական պայքարի փոփոխության արդյունքում փորձ կատարվեց համախմբել քաղաքական ուժերին, սակայն Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության (ԼՂՀ) հռչակումից հետո տեղի ունեցած քաղաքական գործընթացները ապացուցեցին հակառակը: Ներքաղաքական խմորումները ավելի ակնհայտ դարձան 1992 թ. հունվարի 6–7-ը ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահի ընտրությունների ժամանակ, երբ բացահայտ երևաց երկու հակոտնյա քաղաքական ուժերի պայքարը: Իշխանության եկած ուժերին հաջողվեց պահպանել ներքաղաքական կայունությունը, դրսևորել քաղաքական կամք, որի արդյունքում երկիրը ժամանակավորապես դուրս եկավ ստեղծված իրավիճակից:

---

* *Հոդվածը ներկայացվել է 26.04.24, գրախոսվել է 12.05.24, ընդունվել է տպագրության 30.04.25:*

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

Բանալի բառեր՝ *Արցախ, արցախյան շարժում, քաղաքական գործընթացներ, Գերագույն խորհուրդ, կոորդինացիոն խորհուրդ, Իգոր Մուրադյան, Հակոբ Խաչատրյան:*

Ներածություն

Լեռնային Ղարաբաղը (ԼՂ), լինելով Մեծ Հայքի Արցախ նահանգի մի հատվածը, խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1921 թ. ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի հուլիսի 5-ի ապօրինի որոշմամբ բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին:[1] 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմը ընդունեց հռչակագիր, որով Լեռնային Ղարաբաղից անջատվեց նրա դաշտային մասը և ստեղծվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը»[2] (ԼՂԻՄ): 1923–1930 թթ. ԼՂԻՄ-ից անջատվեցին մի շարք հայաշատ շրջաններ եւ միացվեցին արհեստականորեն ստեղծված Ադրբեջանի Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի և Շահումյանի շրջաններին: Ավելին՝ Շահումյանի շրջանից անջատեցին Գետաշենի հայկական ենթաշրջանը և նրա փոխարեն դրան միացրեցին 4 ադրբեջանական գյուղեր: ԼՂԻՄ-ը Հայաստանից անջատելու նպատակով Ադրբեջանը 1923 թ. ստեղծեց «Կարմիր Քրդստանի Հանրապետությունը», որն իր սև գործը կատարելուց հետո 1929 թ. վերացվեց: Դրա փոխարեն կազմավորվեցին Քելբաջարի (Քարվաճառ), Լաչինի և մասամբ Ղուբաթլուի (Քաշաթաղ) շրջանները:[3]

Ադրբեջանի կողմից տասնամյակներ ի վեր կիրառված հակահայկական քաղաքականությունը, հայ բնակչության մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարումը ստեղծեցին ծայրահեղ լարված իրավիճակ: Արցախահայությունը 70 տարի անընդմեջ պայքարեց ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ, սակայն Ղարաբաղյան կնճիռը մնաց անլուծելի:

Արցախյան շարժման նոր փուլը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Արտաքուստ թվում էր, թե ընդհանուր շարժումը ղեկավարվում է մեկ կենտրոնի կողմից, սակայն վերլուծելով պատմական

---

[1] Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов 1992, 650.

[2] Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов 1992, 669–670.

[3] Տե՛ս К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, 1918–1925: Документы и материалы 1989, 173–175.

դեպքերը և քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը, կարելի է ենթադրել, որ որքան էլ դա անտրամաբանական է, շարժման ղեկավարման հիմքում կանգնած էին հակոտնյա երկու քաղաքական ուժեր:

Սույն հոդվածում կփորձենք բացահայտել և համակարգային վերլուծության ենթարկել այնպիսի փոխկապակցված, միմյանց փոխպայմանավորող էական հիմնահարցեր, ինչպիսիք են քաղաքական դաշտի ձևավորման նախադրյալները, քաղաքական ուժերի դիրքորոշումը, ինչպես նաև ներքաղաքական հակասությունների պատճառները:

Քննվող հարցը ուսումնասիրողների համար ցայսօր սակավ հետազոտված հիմնախնդիրներից է: Թեմային առչվող առանձին ուղղություններ, ժամանակահատվածներ և դրվագներ լուսաբանվել են, վեր են հանվել, փաստացի տրվել են կարևոր գնահատականներ, սակայն ստվերում են մնացել քաղաքական կյանքի տարբեր փուլերի առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Սույն հոդվածում առաջին անգամ փորձ է կատարվում վերլուծել քաղաքական զարգացումների համապատկերում թեմային առնչվող չլուսաբանված հիմնախնդիրները: Հնարավորինս և ամբողջական ներկայացվում է նաև տվյալ ժամանակահատվածի քաղաքական ու ռազմական որոշ գործիչների ներդրումը արցախյան շարժման նոր փուլի գործընթացում, որոնց մի մասը քաղաքական ուժերի բախումների արդյունքում դուրս է մնացել պատմության էջերից:

Խնդրո առարկա հիմնահարցը լուսաբանվում և վերլուծվում է արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրային գրականության, մամուլի հրապարակումների, հետազոտությունում արծարծված հիմնահարցերին վերաբերող գիտական գրականության հիման վրա:

Կարևոր սկզբնաղբյուր են իրադարձությունների մասնակիցների և ականատեսների հուշագրությունները, օրագրություններն ու փաստագրությունները: Այս ժանրի նյութի արժեքը կայանում է նրանում, որ, պարունակելով մանրամասնություններ, դրանք լրացնում ու հարստացնում են իրադարձությունների մասին պատկերացումները, օգնում խորությամբ հասկանալ դեպքերի զարգացման տրամաբանությունը, դրանց պատճառահետևանքային կապը, պատասխանել բազմաթիվ հարցադրումների:

Ուսումնասիրության մեջ տեղ են գտել քաղաքական տարբեր կողմնորոշում ունեցող քաղաքական գործիչների վկայություններ:

Այսպիսով, իրենց ամբողջությամբ՝ օգտագործված սկզբնաղբյուրները հնարավորություն կտան վերստեղծել ուսումնասիրվող շրջանի քաղաքական գործընթացների ամբողջական պատկերը:

Քաղաքական գործընթացները և Արցախյան շարժման նոր փուլի ձևավորումը

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը նոր փուլ թևակոխեց Խորհրդային Միությունում գորբաչովյան, այդպես կոչված «վերակառուցման» քաղաքականությանը անցնելուց հետո: Մինչդեռ 1980-ական թվականների կեսերից մտավորականության և ուսանողության շրջանում արդեն սկսել էին բարձրաձայն քննարկվել ԼՂԻՄ-ում տասնամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնախնդիրները՝ մատնանշելով հայկական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու վաղեմի իղձերի իրագործման ուղիները:

Քննարկվող հարցերին գործնական ընթացքն ապահովելու նպատակով դեռևս 1981 թ. Ստեփանակերտում ստեղծվել էր «Արցախ» ընդհատակյա կազմակերպությունը, իսկ 1986 թ. այն վերանվանվեց «Արցախական միություն»[4] կամ «Արցախյան ազգային միություն»:[5]

Կազմակերպության ստեղծման գործում մեծ դերակատարություն ունեցան Արկադի Կարապետյանը, Հակոբ Խաչատրյանը, Իգոր Մուրադյանը, Արթուր Մկրտչյանը, Մանվել Սարգսյանը, Էմիլ Աբրահամյանը և այլք:[6] Կազմակերպության կենտրոնական կոմիտեի նախագահ ընտրվեց Արկադի Կարապետյանը, իսկ քարտուղար՝ Հակոբ Խաչատրյանը: Միության մեջ ընդգրկված էին նաև երիտասարդ մտավորականներ, ուսանողներ, որոնք ընդհատակյա պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական շարժման կրողները դարձան՝ հետագայում ստանձնելով ուսանողության կազմակերպման, նրանց գաղափարական կողմնորոշման առաքելությունը:

1987 թ. վերջերին – 1988 թ. սկզբներին արցախյան ազգային-ազատագրական պայքարը նոր թափ ստացավ: Շարժման մեջ ներգրավվածները սկզբնական շրջանում հարցի լուծումը փնտրում էին Խորհրդային Միության նոր ղեկավարության հետ ակտիվ շփումների մեջ: Շարժման ղեկավարութ-

---

[4] Տե՛ս https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum (մուտք՝ 26.04.2024):

[5] Տե՛ս **Հակոբյան Վ.,** անձնական արխիվ:

[6] Տե՛ս **Հակոբյան** 2022, 221:

յունն ամեն առիթով փորձում էր մոսկովյան ատյաններում արցախցիների պայքարը ներկայացնել վերակառուցման և հրապարակայնության գաղափարների լույսի ներքո՝ դրան օրինական տեսք տալու համար:

Դրա առաջին դրսևորումը դարձավ 1987 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու ստորագրահավաքը: Կազմակերպության ջանքերով հավաքվում էին Արցախի և Ադրբեջանի տարածքում հայության իրավունքների ոտնահարման և «սպիտակ ցեղասպանության» իրագործումը հաստատող փաստեր:

1988 թ. փետրվարի սկզբին կազմակերպությունը լուծարվում է՝ անդամների քաղաքական տարաձայնությունների պատճառով:[7]

Շարժման մեջ, բացի ազգային-ազատագրական պայքարի գաղափարով առաջնորդվող հայրենասիրական ուժերից, ներգրավվեցին նաև կոմունիստական կուսակցական ակտիվը, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարները: Միաժամանակ նշենք նաև, որ գոյություն ունի կարծիք, որ թե Արցախում, թե Հայաստանում արդեն թափ հավաքած շարժման մեջ ընգրկվեցին խորհրդային հատուկ ծառայությունների գործակալներ, ովքեր կարողացան շարժման վերահսկողությունը վերցնել իրենց ձեռքը՝ փոխելով դրա ընթացքը և ուղղությունը՝ ազգային նպատակներից անցնելով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) ժողովրդավարացման համար ընդհանուր պայքարի: Այսօր նրանց գործունեության պատմությունը դեռևս լուսաբանված չէ:

1988 թ. փետրվարի կեսերին «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրատանը ստեղծվում է մի նոր նախաձեռնող խումբ, որի ղեկավար ընտրվեց Արկադի Մանուչարովը:[8] Քիչ անց, 1988 թ. մարտի 1-ին ստեղծվեց «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամ կոմիտեն: Հիմնադիր ժողովում ընտրվեց խորհուրդ՝ հետևյալ կազմով. Արկադի Մանուչարով (նախագահ), Ռոբերտ Քոչարյան, Վարդան Հակոբյան, Մաքսիմ Միրզոյան (տեղակալներ), Գուրգեն Գաբրիելյան, Հրաչյա Բեգլարյան, Ժաննա Գալստյան, Համլետ Գրիգորյան, Արկադի Կարապետյան, Վալերի Մարության, Համլետ Մովսիսյան, Յուրի Ներսիսյան, Բենիկ Օվչյան:[9] Կոմիտեն իր աշխատանքները կանոնավոր հունի մեջ դնելու նպատակով ստեղծում է հանրահա-

[7] Տե՛ս https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 26.04.2024):

[8] Տե՛ս **Աբրահամյան** 2007, 36:

[9] Տե՛ս **Բալայան** 2012, 287:

վաքների կազմակերպման, լոգունգների պատրաստման, ֆինանսների, քաղաքական հարցերի, գաղթի և արտագաղթի, լրատվության, հասարակական կարգի պահպանման, անվտանգության և քարտուղարության հանձնաժողովներ:[10]

1988 թ. մարտի 24-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշեց լուծարել «Կռունկ» կոմիտեն, արգելել ցույցերը, գործադուլները և հանրահավաքները: Կոմիտեն անցավ ընդհատակ, իսկ 1988 թ. հուլիսի 29-ին տրոհվեց, վերջինիս հենքի վրա ստեղծվեցին «Տնօրենների խորհուրդ» և «Միացում» կազմակերպությունները:[11] «Տնօրենների խորհուրդ» կազմակերպությունը գլխավորեց Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանը,[12] իսկ «Միացումը»՝ Ռոբերտ Քոչարյանը: Սակայն այս նոր մարմիններն ի զորու չէին Արցախի ողջ տարածքում համակարգել օրեցօր թափ առնող ազատագրական պայքարը:

Դրան զուգահեռ 1988 թ. փետրվարի 24-ին «Արցախյան ազգային միություն» կազմակերպության հիմքի վրա ստեղծվում է «Հայոց Ընկերվարական Արցախական Կուսակցությունը» (ՀԸԱԿ):[13] Սկզբնական շրջանում այն ավելի շատ դեկլարատիվ բնույթ էր կրում՝ չուներ ծրագիր և կանոնադրություն: 1988 թ. սեպտեմբերի 17-ին հրավիրված ընդհանուր ժողովը հաստատում է կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը:[14] Ծրագրի առանցքը կազմում էր Հայ Դատը: Որպես գործունեության սկզբունք ՀԸԱԿ-ն որդեգրել էր ապակենտրոնացումը, հաշվի առնելով հայության և մասնավորապես՝ արցախահայության ազգային ու քաղաքական իրականության առանձնահատկությունները: Կազմավորվեց բյուրո հետևյալ կազմով՝ Հակոբ Խաչատրյան (նախագահ), Լևոն Ավանեսյան (քարտուղար), Արկադի Կարապետյան (մարտական գործերի պատասխանատու), Գենադի Ներսիսյան, Աշոտ Սարգսյան, Վարդան Արզումանյան, Ալեքսանդր Ավետիսյան: ՀԸԱԿ բյուրոյին կից գործում էին գաղափարախոսության-քարոզչության, մարտական, տնտեսական և հատուկ բաժինները[15]:

---

[10] Տե՛ս **Բալայան** 2012, 287:

[11] http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Krunk_Komite (մուտք՝ 28.04.2024):

[12] Տե՛ս **Բալայան** 2012, 292:

[13] Տե՛ս **Հակոբյան Վ.,** անձնական արխիվ:

[14] «Կաճառ» գիտական կենտրոն ՀԿ-ի արխիվ, ֆոնդ 8, ցուցակ 1, գործ 2, 1–25 թ.:

[15] Տե՛ս https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):

ՀԸԱԿ-ը հրատարակում է «Վերածնունդ» պաշտոնաթերթը: ՀԸԱԿ բյուրոն գտնում էր, որ հարցի լուծման այսպես կոչված քաղաքական՝ խաղաղ տարբերակը ցանկալի է, բայց ոչ իրատեսական, ուստի կոչ էր անում արցախահայությանը համախմբվել, զինվել և նախապատրաստվել ինքնապաշտպանության: Նույնիսկ Սումգայիթյան եղեռնագործությունից հետո ՀԸԱԿ բյուրոն որոշում է արյանը արյամբ պատասխանել՝ պատժիչ գործողություն իրականացնել ադրբեջանաբնակ Ջամիլու գյուղում: Արցախի քաղաքական այլ ուժերը տեղեկանալով այդ մասին, կանխում են՝ «համոզելով», որ նման գործողությունը կվնասի ազգային-ազատագրական պայքարի քաղաքական ոգուն:[16]

Բյուրոյի հրահանգով ստեղծվեցին գաղտնի ինքնապաշտպանական ջոկատներ, որի կազմակերպման և զինման գործառույթները դրվեցին Արկադի Կարապետյանի և Աշոտ Ղուլյանի վրա (Բեկոր): Ինքնապաշտպանական ջոկատների հիմնական զինանոցը ինքնաշեն զենքերն էին: Այդ ժամանակ Արցախում լայն թափ էր ստացել ինքնաշեն զենքերի արտադրությունը: 1988 թ. նոյեմբերին, փորձարկվում են Աշոտ Ղուլյանի նախագծած ականներն ու նռնակները, ինչպես նաև ականանետը:

Այսպիսով, վերոնշյալ սպառնալիքների պայմաններում՝ 1988 թ. փետրվարյան բուռն իրադարձությունների բովում ծնված զինված ազատագրական և ինքնապաշտպանության գաղափարը դարձավ հրամայական անհրաժեշտություն: Սակայն վերոնշյալ կազմակերպությունները չէին կարող լիարժեք ստանձնել ազգային-ազատագրական պայքարի առաջատարի դերը, քանի որ չունեին քաղաքական ու զինված պայքարի փորձ և մշակված ռազմավարություն, այսինքն այն, ինչ պահանջում է ազգային-ազատագրական շարժման տրամաբանությունը: Նշված դերակատարությունները կարող են ստանձնել միայն փորձառու ազգային կուսակցությունները, որոնք, ուշացումով միացան շարժմանը:

Ստեղծված իրավիճակում ՀԸԱԿ բյուրոն քաղաքական որոշում կայացրեց խորհրդակցություններ իրականացնել Հայաստանյան քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ, որի նպատակն էր ձևավորել ազգային-ազատագրական պայքարի տրամաբանությանը համահունչ միասնական քաղաքական օրակարգ, ինչպես նաև համագործակցության ուղիներ:

---

[16] Տե՛ս https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan -paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):

Այս համատեքստում 1989 թ. ապրիլին Երևանում գաղտնի խորհրդակցություններ տեղի ունեցան ՀՅԴ ներկայացուցիչների հետ: Երկարատև քննարկումներից հետո ՀԸԱԿ բյուրոյի անդամները որոշում են ընդունել ՀՅԴ բյուրոյի առաջարկը և անդամակցել ՀՅԴ-ին, քանի որ ՀԸԱԿ ծրագիրն ու գործելաոճը շատ մոտ էր վերջիններիս գաղափարական ու կազմակերպական նախասիրություններին:[17] 1989 թ. մայիսի 3-ին ՀՅԴ բյուրոյի որոշմամբ հատուկ շրջաբերականով ստեղծվեց ՀՅԴ Արցախի «Անտառ» կոմիտեն՝ հետևյալ կազմով. Հակոբ Խաչատրյան (նախագահ), Լևոն Ավանեսյան (քարտուղար, գաղափարա-քաղաքական բաժնի պատասխանատու), Արկադի Կարապետյան (մարտական գործերի պատասխանատու), Գենադի Ներսիսյան (ֆինանսա-տնտեսական բաժնի պատասխանատու), Աշոտ Սարգսյան (հատուկ բաժնի պատասխանատու):

ՀՅԴ բյուրոյի որոշմամբ Արցախ է գործուղվում բյուրոյի գործիչ Վարանդ Փափազյանը: Նրա ցուցումներով և ակտիվ գործունեության շնորհիվ վերակազմվում են նախկին կուսակցական (ՀԸԱԿ) խմբերը, ստեղծվում են նորերը:[18]

Հետագայում ներքին տարաձայնությունների պատճառով Հակոբ Խաչատրյանը և մի շարք ՀԸԱԿ անդամներ դուրս եկան ՀՅԴ շարքերից: Վերջիններս 1990 թ. հիմնադրեցին «Հայ ազգայնական ճակատ» կազմակերպությունը:[19] Կազմակերպության գաղափարական հիմքը Գարեգին Նժդեհի կողմից մշակված Ցեղակրոն գաղափարախոսությունն էր: «Հայ ազգայնականության ճակատ» կազմակերպությունը բացի քաղաքական թևից, ուներ նաև ռազմական թև, որը կոչվել է «Ցեղակրոն» կամավորական ջոկատ: Այն կազմավորվել է 1990 թվականի օգոստոսի 11-ին: Ջոկատում հիմնականում ընդգրկվել են ուսանողներ:[20]

1990–1993 թվականներին ջոկատը մասնակցել է Արցախի Հանրապետության Մարտունու (Ղարադաղլու), Ասկերանի (Փառուխ, Դահիրազ, Սառնաղբյուր), Շուշիի (Բերդաձորի ենթաշրջան), Մարտակերտի (Տոնաշեն, Թալիշ, «Պուշկինյալ» և հեռուստաաշտարակի բարձունքների, Դրմբոն, Առաջա-

[17] Տե՛ս https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):

[18] Տե՛ս https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum/ (մուտք՝ 28.04.2024):

[19] Տե՛ս Հակոբյան Վ., անձնական արխիվ:

[20] Տե՛ս https://aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh%e2%80%a4-aporini-dzerbakaluthyunner-1990-akannerin/ (մուտք՝ 26.04.2024):

ձոր) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ ջոկատը տվել է 27 զոհ:

1992–1993 թթ. Արցախում ստեղծված ներքաղաքական բարդ իրավիճակում (ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության և Պաշտպանության պետական կոմիտեի միջև ծագած քաղաքական հակամարտության շրջանում) ջոկատի մի մասը ստանձնել է ԼՂՀ ԳԽ շենքի և նախագահության անդամների պահպանությունը: 1993 թվականին ջոկատը լուծարվել է: Արցախում ստեղծված քաղաքական նոր իրողության պայմաններում ջոկատի մարտիկների մի մասը նույնպես ձերբակալվեցին քաղաքական հայացքների պատճառով: Նրանք, անցնելով խոշտանգումների միջով, հանցակազմի բացակայության պատճառով ազատ արձակվեցին: Նույն բախտին արժանացավ նաև Հակոբ Խաչատրյանը:[21] Վերջինս բանտից ազատվելուց հետո ունեցավ հոգեբանական լուրջ խնդիրներ և մինչև մահկանացուն կնքելը չկարողացավ համակերպվել արժեհամակարգային փոփոխության իրողության հետ: Միաժամանակ նշենք նաև, որ Հակոբ Խաչատրյանը չարժանացավ պետական որևէ ուշադրության:[22]

Քաղաքական գործընթացների հետագա ընթացքը և դրանց ազդեցությունը պետական մարմինների ձևավորման վրա

ՀՅԴ լինելով ազգային-ազատագրական պայքարի գաղափարակիր, նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով անմիջապես իր վրա վերցրեց Արցախում ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման և զինման գործը:

Ընդառաջ գնալով օրվա հրամայականին՝ ՀՅԴ գործիչները տեղի ազգային ուժերի հետ միասին առաջին գործնական քայլերը ձեռնարկեցին ինքնապաշտպանության ջոկատները միավորելու ուղղությամբ: 1991 թ. սկզբին Արցախում արդեն գործում էր կենտրոնական շտաբը, ով Արցախի պաշտպանության կազմակերպման գործընթացը սկսեց համակարգել մեկ կենտրոնից: Շտաբի պետ և ինքնապաշտպանության ուժերի առաջին հրամանատար դարձավ Արկադի Կարապետյանը (Դաշնակ Ագո): Հետախուզության պետ նշանակվեց Վալերի Բալայանը:[23] Յուրաքանչյուր շրջան ուներ իր հրամանա-

[21] Տե՛ս **Հակոբյան Վ.,** անձնական արխիվ:

[22] Տե՛ս https://aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh/ (մուտք՝ 30.04.2024):

[23] Տե՛ս http://www.nankr.am/hy/2372 (մուտք՝ 30.04.2024):

տարությունը, որը ենթարկվում էր կենտրոնական շտաբին՝ բացառությամբ մի քանի ջոկատների:[24] Ինքնապաշտպանական ուժերը մարտական առաջին մկրտությունը ստացան Հյուսիսային Արցախում, Հադրութում և Արցախի այլ տարածքներում:

Շարժումը ղեկավարելու և քաղաքական գործընթացները համակարգելու նպատակով կենտրոնական շտաբին կից ստեղծվեց 7 հոգուց բաղկացած այսպես կոչված՝ «Կոորդինացիոն խորհուրդ», որի կազմում ընդգրկված էին Արցախում գործող քաղաքական ուժերի ներկայացուցիչները (Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Գեորգի Պետրոսյան, Վալերի Բալայան, Ժաննա Գալստյան, Սերժ Սարգսյան, Ռոբերտ Քոչարյան, Մուրադ Պետրոսյան): Միաժամանակ նշենք, որ Կոորդինացիոն խորհրդի ստեղծմամբ փորձ կատարվեց համախմբել այդ ժամանակաշրջանում Արցախում գործող հակոտնյա երկու քաղաքական ուժերը: Խորհուրդը, հատկապես Շարժման առջև կանգնած դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում, ոչ միայն ցուցաբերում էր մեծ ակտիվություն, այլև դարձել էր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն:

Մինչև ԼՂՀ հռչակումը և ԳԽ ընտրությունները, Արցախում որոշ չափով պահպանվում և գործում էին խորհրդային իշխանության մարմինները, սակայն մարզում ստեղծված իրադրությամբ և դեպքերի զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիրները լուծելու գործում վերջիններս ցուցաբերում էին երկչոտություն, ինչը բացասական ազդեցություն էր թողնում մարզի կառավարման համակարգի արդյունավետության վրա: Ստեղծված իրավիճակով պայմանավորված Կոորդինացիոն խորհուրդը մասամբ իր վրա վերցրեց կառավարման համակարգի լիազորությունները:

Առաջին հայացքից թվում էր թե խորհրդի ստեղծմամբ մարվել էին ներքաղաքական հակասությունները Արցախում, սակայն ԼՂՀ հռչակումից հետո առաջին գումարման ԳԽ ընտրությունները ցույց տվեցին հակառակը: Հատկապես դա երևաց ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրությունների և պետական մարմինների ձևավորման ընթացքում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ ընտրություններում հաղթանակ տանելով, ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իշխանությունների հետ կանոնավոր հարաբերություններ

[24] Տե՛ս **Հակոբյան** 2019, 66:

ստեղծելու նպատակով մի շարք կարևոր իշխանական պաշտոններ հանձնել հակառակ քաղաքական թևին:[25]

Սակայն պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը, որոնք սակայն այլ ուսումնասիրության նյութ են:

Վերջում ցանկանում ենք նշել, որ ԼՂՀ հռչակումից հետո՝ պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: Այս կառույցների ստեղծումը, չնայած ռազմաքաղաքական դժվարին կացությանը, տեղի ունեցան միջազգային ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխան: Արցախում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ նույնիսկ նկատվող ներքաղաքական բարդ իրադրության և սաստկացող ռազմական գործողությունների պայմաններում իշխանության գլուխ անցած ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, կարողացան ինքնուրույնաբար ստեղծել հիմքերը իրավական և ժողովրդավարական մի պետության, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի ագրեսիային և պահպանել իր անկախությունը:

Եզրակացություն

ԽՍՀՄ գոյության 70-տարիների ընթացքում՝ չնայած արցախահայության հանդեպ գործադրված բռնություններին ու հալածանքներին՝ երբեք չդադարեց Մայր Հայաստանին միանալու համար նրա անհավասար պայքարը:

Գորբաչովյան այդպես կոչված «վերակառուցման» քաղաքականությունը նպաստեց արցախահայության քաղաքական պայքարի ծավալմանը, և ազատագրումն ադրբեջանական բռնատիրությունից դարձավ օրակարգի հարց:

Ազատագրական պայքարում ներգրավված ուժերը, հաղթահարելով իրենց առջև ծագած վայրիվերումները, շրջանցելով քաղաքական և գաղափարական տարաձայնությունները, կարողացան շարժվել ժամանակի քաղաքական պահանջներին համահունչ՝ իրենց վրա կրելով նաև ազատագրական պայքարի կազմակերպման ողջ ծանրությունը:

[25] Տե՛ս **Հակոբյան** 2011, 37:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Հ. 2007, Մարտնչող Արցախը (1917–2000), գիրք Գ (1985–2000), Ստեփանակերտ, «Դիզակ Պլյուս», 744 էջ: *(**Abrahamyan H.** 2007, Martnchogh Arcaxy' (1917–2000), girq G (1985–2000), Step'anakert, «Dizak Plyows», 744 e'j). **Abrahamyan H.** 2007, The Fighting Artsakh (1917–2000), Book III (1985–2000), Stepanakert, "Dizak Plus," 744 p. (in Armenian).*

Բալայան Վ. 2012, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813–2007 թթ.), Ստեփանակերտ, «Սոնա», 287 էջ: *(**Balayan V.** 2012, Drvagner arcaxahayowt'yan azatagrakan payqari ev petakanakertman patmowt'yan (1813–2007 t't'.), Step'anakert, «Sona», 287 e'j). **Balayan V.** 2012, Episodes from the History of the Artsakh Armenians' Liberation Struggle and State-Building (1813–2007), Stepanakert, "Sona," 287 p. (in Armenian).*

ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանի անձնական արխիվ՝ «Հայ ազգայնականության ճակատի» կենտրոնական վարչության նախագահ Հակոբ Խաչատրյանի դիմումը՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդին (1993 թ., դեկտեմբեր): *(LGhH ar'ajin gowmarman Geragowyn xorhrdi qartowghar, patmakan gitowt'yownneri t'eknac'ow V. Hakobyani and'nakan arxiv՝ «Hay azgaynaanowt'yan twakati» kentronakan varchowt'yan naxagah Hakob Xachatryani dimowmy'՝ LGhH ar'ajin gowmarman Geragowyn xorhrdin (1993 t'., dektember)). Personal archive of V. Hakobyan, Secretary of the First Convocation of the Supreme Council of the NKR and Candidate of Historical Sciences: Application of Hakob Khachatryan, Chairman of the Central Administration of the "Front of Armenian Nationalism," to the First Convocation of the Supreme Council of the NKR (December 1993) (in Armenian).*

«Կաճառ» գիտական կենտրոն ՀԿ-ի արխիվ, ֆոնդ 8, ցուցակ 1, գործ 2, թ. 1–25: *Archive of the "Katchar" Scientific Center NGO, Fund 8, Inventory 1, File 2, pp. 1–25.*

Հակոբյան Տ. 2011, ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991–1994 թթ.), Երևան, «Էդիթ Պրինտ», 208 էջ: *(**Hakobyan T.** 2011, LGhH hr'chakowmy' ev petakan shinararowt'yan gorc'y'nt'acy' (1991–1994 t't'.), Erevan, «E'dit' Print», 208 e'j). **Hakobyan T.** 2011, The Proclamation of the NKR and the Process of State Building (1991–1994), Yerevan, "Edit Print," 208 p. (in Armenian).*

Հակոբյան Տ. 2022, Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հռչակումը, որպես արցախյան շարժման նոր փուլի ձեռքբերում, ԱրՊՀ, «Գիտական տեղեկագիր», ՊՐԱԿ 1, Ստեփանակերտ, էջ 218–227: *(**Hakobyan T.** 2022, Ler'nayin Gharabaghi (Arcaxi) Hanrapetowt'yan hr'chakowmy', orpes arcaxyan sharjhman nor p'owli d'er'qberowm, ArPH, «Gitakan teghakagir», PRAK 1, Step'anakert, e'j 218–227). **Hakobyan T.** 2022, The Proclamation of the Republic of Nagorno-Karabakh (Artsakh) as an Achievement of the New Phase of the Artsakh Movement, ASUE, "Scientific Bulletin," Issue 1, Stepanakert, pp. 218–227 (in Armenian).*

Հակոբյան Տ. 2019, ԼՂՀ ձևավորումը որպես մեկնակետ միացյալ Հայաստանի ճանապարհին, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, թիվ 3 (67), էջ 64–77: *(**Hakobyan T.** 2019, LGhH d'evavorowmy' orpes meknaket miacyal Hayastani twanaparhin, «Ve'm» hamahaykakan handes, Erevan, t'iv 3 (67), e'j 64–77). **Hakobyan T.** 2019, The Formation of the NKR as a Starting Point on the Path to a United Armenia, "Vem" Pan-Armenian Journal, Yerevan, № 3 (67), pp. 64–77 (in Armenian).*

Հակոբյան Տ., Պատմությունը պատժում է նրանց, ովքեր մոռանում են իր դասերը. ապօրինի ձերբակալություններ 1990-ականներին https://aparaj.am/ patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh%e2%80%a4-aporini-dzerbakaluthyunner-1990-akannerin/ (մուտք՝ 26.04.2024):. ***Hakobyan T.**, History Punishes Those Who Forget Its Lessons: Illegal Arrests in the 1990s, https://aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh (26.04.2024).*

Հակոբյան Տ., Պատմությունը պատժում է նրանց, ովքեր մոռանում են իր դասերը, https://aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh/ (մուտք՝ 30.04.2024): ***Hakobyan T.**, History Punishes Those Who Forget Its Lessons, https:// aparaj.am/patmuthyuneh-patzhum-e-nranc-ovkher-moranum-en-ir-dasereh (30.04.2024).*

Սարգսյան Ա., ՀՅԴ Արցախյան կառույցի հիմնադրումը եւ նրա դերը Արցախյան պատերազմի նախապատրաստման գործում, https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum (դիտվել է՝ 26.04.2024 թ.): ***Sargsyan A.**, The Establishment of the ARF Artsakh Organization and Its Role in Preparing for the Artsakh War, https://aparaj.am/hyd-arcaxyan-karuyci-himnadrumeh-e%D6%82-nra-dereh-arcaxyan-paterazmi-naxapatrastman-gortcum (26.04.2024).*

К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР 1989, 1918–1925. Документы и материалы, Баку, изд-во Азернешр, 334 с. *On the History of the Formation of the Nagorno-Karabakh Autonomous Oblast (Province) of the Azerbaijan SSR 1989, 1918–1925. Documents and Materials, Baku, Azerneshir Publishing, 334 p. (in Russian).*

Нагорный Карабах в 1918–1923 гг. 1992, Сборник документов и материалов / Отв. ред. В.А. Микаелян; АН Армении, Ереван, изд-во АН Армении, 756 с. *Nagorno-Karabakh in 1918–1923, 1992, Collection of Documents and Materials / Ed. by V.A. Mikaelyan; Armenian Academy of Sciences, Yerevan, Publishing House of the Armenian Academy of Sciences, 756 p. (in Russian).*

http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Krunk_Komite (28.04.2024).

http://www.nankr.am/hy/2372 (30.04.2024).

TARON HAKOBYAN

PhD in History, Associate Professor
Institute of History RA NAS,
Military Academy named after Vazgen Sargsyan, MoD RA,
hakobyan76taron@gmail.com
0009-0009-9124-4273

POLITICAL PROCESSES IN ARTSAKH (1986–1991)

Summary

The article presents the political events in Artsakh in 1986-1991. Special attention is paid to the role and significance of the underground and non-underground organizations created in the context of the new stage of the Artsakh movement.

Throughout the 70 years of the existence of the USSR, violence and persecution were practiced against the Armenian population of Artsakh. Despite this, the struggle for joining Mother Armenia never ceased. Individual episodes of this persistent struggle, which for decades took the form of statements, petitions, and unrest in Soviet Armenia and the NKAO, were silenced or suppressed by the high-ranking Soviet leadership.

The relatively favorable political conditions created in the USSR after 1985 provided the Armenian population of Artsakh with the opportunity to once again defend their violated rights and demand the unification of the Nagorno-Karabakh Autonomous Oblast with the Armenian Soviet Socialist Republic.

Initially, the leadership of the movement tried at every opportunity to present the struggle of the Artsakh people in Moscow in the light of the ideas of reconstruction and glasnost in order to give it a legal appearance. However, ignoring the right of the Armenian population of Artsakh to self-determination and the legal and political justification of its demands, Azerbaijan, under the aegis of Moscow, once again preferred uncivilised methods of resolving the issue, or, more precisely, its extermination by organizing ethnic cleansing.

The movement was born in the whirlwind of national awakening. At first it was led by intellectuals with a national mindset and young people imbued with a national ideology. Later, it was joined by active members of the Communist Party, as well as heads of institutions and enterprises who attempted to lead the movement. Later on, two opposing political currents were formed in the movement, whose activities had a negative impact on the liberation struggle.

As a result of the change in the format of the struggle, an attempt was made to unite political forces. The political processes after the proclamation of the Nagorno-Karabakh Republic (Artsakh) proved otherwise. The internal political turmoil became more obvious during the elections of the Chairman of the NKR Supreme Council of the first convocation on 6-7 January 1992, when the conflict between the opposing forces was quite aggressive. The forces that came to power managed to preserve internal political stability, showed political will, as a result of which the country temporarily got out of the situation.

Thus, by overcoming obstacles, bypassing political and military conflicts, the forces involved in the liberation struggle, thanks to their determination, were able to move in accordance with the requirements of the time, while bearing the burden of organizing the liberation struggle.

Keywords: *Artsakh, Artsakh movement, political processes, Supreme Council, Coordination Council, Igor Muradyan, Hakob Khachatryan.*